ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԾԱԹԵՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ծաթեր համայնք, հասցե՝ գ. Ծաթեր փ. 7, շենք 4
Էլ. հասցե՝ taster.lori@mta.gov.am ☏091 33 91 77

թիվ 00/206
<<30>> դեկտեմբերի 2016թ.

ՀՀ Լոռու մարզպետ
պարոն Արթուր Նալբանդյանին

Հարգելի պարոն մարզպետ

Կից Ձեզ եմ ներկայացնում Ծաթեր համայնքի ավագանու վերջին՝ N 33-Ն որոշումն իր հավելվածով:

Առդիր՝ 25 թերթ:

Համայնքի ղեկավար՝ Բ. Ղալայան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԾԱԹԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ծաթեր համայնք, հասցե՝ գ. Ծաթեր փ. 7, շենք 4
էլ. հասցե՝ tsater.lori@mta.gov.am ☎091 33 91 77

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<20>> դեկտեմբերի 2016 թվականի N 33-Ն

ԾԱԹԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետով և <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 72-րդ հոդվածով Ծաթեր համայնքի ավագանին որոշում է.

1.Հաստատել Ծաթեր համայնքի 2017-2021 թվականների զարգացման ծրագիրը՝համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

	Համայնքի ավագանու անդամներ	*կողմ(4)*	*դեմ(0)*	*ձեռնպահ(0)*
1	Այդինյան Ալիկ			
2	Գևորգյան Ցոլակ			
3	Գրիգորյան Քնարիկ			
4	Վիրաբյան Ռազմիկ			

Համայնքի ղեկավար՝ Բ. Ղալայան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ԾԱԹԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ
2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

Զ Ա Ր Գ Ա Ց Մ Ա Ն Հ Ն Գ Ա Մ Յ Ա
Ծ Ր Ա Գ Ի Ր

Ներկայացվել է՝ համայնքի ղեկավար Բագրատ Ղալայան կողմից

Հաստատվել է՝ համայնքի ավագանու 20.12.2016թ-ի N 33 - Ն որոշմամբ

ԾԱԹԵՐ
2016

Բովանդակություն

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք _____3
2. Համայնքի իրավիճակի նկարագրություն_____4
2.1 Համայնքի ընդհանուր նկարագրություն_____4
2.2 Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակը_____5
2.3 Համայնքում իրականացվող ծրագրերը_____5
2.4 Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրությունը, ֆինանսական կանխատեսումները_____6
2.5 Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ_____7
2.6 Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների /ՈՒԹՍՀ/ վերլուծություն_____7
3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում_____9
3.1 Համայնքի զարգացման տեսլական_____9
3.2 Համայնքի զարգացման անմիջական նպատակները_____11
4. ՀՀԶԾ ֆինանսավորում_____17
5. ՀՀԶԾ մոնիթորինգ_____18

Համայնքի ղեկավարի ողջույնի խոսքը

Հարգելի հայրենակիցներ

ՀՀ Լոռու մարզի Ծաթեր համայնքի հնգամյա /2017-2021թթ./ զարգացման ծրագիրն ուղղված է Ծաթեր համայնքի տնտեսության, սպորտի, մշակույթի և կրթության զարգացմանը, ինչպես նաև կանխատեսում ենք համայնքը դարձնել գյուղատնտեսական մթերքների արտադրության, կրթական և մշակութային զարգացած ենթակառուցվածքներ, բնակչության համար բավարար կենսապայմաններ ունեցող տարածք: Բազմակողմանի քննարկումներ անցած այս ծրագիրն իր մեջ ներառում է այն բոլոր հիմնական արժեքներն ու ուղությունները, որոնք անհրաժեշտ են Ծաթեր համայնքի պայծառ ապագայի համար: Չափազանց կարևորում եմ համայնքի զարգացումն ապահովող ծրագրի բոլոր ուղղությունները և մաղթում մեզ՝ բոլորիս արգասաբեր գործունեություն ի բարօրություն Ծաթեր համայնքի փայլուն ապագայի:

ՀՀ Լոռու մարզի Ծաթեր համայնքի 2017-2021 թթ. զարգացման հնգամյա ծրագիրը մշակելիս առանձնացվել և հաշվի են առնվել հետևյալ չափանիշները՝

- համայնքի ֆինանսական կարողությունը.
- համայնքի բնակչության թվաքանակը.
- Առկա ենթակառույցները և մատուցվող հանրային ծառայությունները.
- համայնքում առկա վտանգները (ռիսկերը):

ՀԶՀԾ-ի բովանդակությունը պայմանավորված է ՀԶՀԾ-ի մշակման համայնքի բնակավայրի ռեսուրսային (մարդկային, գույքային, ֆինանսատնտեսական, տեխնիկական և այլ) հնարավորություններով:

Համայնքի 2017-2021թթ. ՀԶՀԾ-ն մշակվել է՝ հիմք ընդունելով համայնքի ղեկավարի և ավագանու անդամների նախընտրական ծրագրերի դրույթները և նպատակ հետապնդելով հետևողականորեն բարեփոխումներ իրականացնելու ճանապարհով աստիճանաբար լուծել համայնքում առկա հիմնախնդիրները և բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները:

ՀԶՀԾ-ն դիտարկելով որպես համայնքի ռազմավարական պլանավորման կարևորագույն միջոց, համայնքի ղեկավարին կից գործող ՀԶՀԾ-ի և տարեկան բյուջեի կառավարման գծով խորհրդակցական մարմինը՝ փաստաթուղթը մշակելիս, հատուկ ուշադրություն է դարձրել և ձգտել, որպեսզի այն հնարավորինս համահունչ լինի գործողության մեջ դրված ՀՀ ռազմավարական, մարզային և տարածաշրջանային զարգացման ծրագրերին՝ ակնկալելով ՀՀ պետական կառավարման մարմինների, և շահագրգիռ այլ անձանց հետ լիակատար փոխըմբռնում ՀԶՀԾ-ում ներկայացված խնդիրների առնչությամբ և արդյունավետ համագործակցություն դրանց լուծման գործում:

Ծրագրի հիմնական նպատակները.

- գյուղատնտեսական մթերքների արտադրության խթանում
- փոքր և միջին բիզնեսի զարգացման խթանում
- նպաստել գործազրկության մակարդակի նվազեցմանը
- աջակցություն սպորտի մշակույթի և հանգստի զարգացմանը
- կրթական համակարգի զարգացման խթանում

2.ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2.1 ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ծաթեր համայնքը հիմնվել է մոտ 150 տարի առաջ: Այն գտնվում է Լոռու մարզի վարչական տարածքում՝ հյուսիսային մասում: Մարզկենտրոնից հեռավորությունը 60 կմ է: Շրջկենտրոնը՝ քաղաք Ալավերդի, որից գյուղի հեռավորությունը մոտ 22 կմ է: Գյուղի բարձրությունը ծովի մակերևույթից 1260 մ է, հեռավորությունը մոտակա երկաթուղուց՝ 20 կմ: Գյուղի վարչական տարածքը 685.9 հա է , որից բնակելի զանգվածը կազմում է 27.55 հա:

Կլիման՝

Ծաթեր համայնքի տարածքը գտնվում է չափավոր կլիմայական գոտում. Չափավոր տաք ամառով, չափավոր տաք ձմեռով: Օդի խոնավությունը 58-62%, քամու միջին տարեկան արագությունը՝ 2.1մ/վ: Տեղումները՝ 722մմ: Ամառը կարճ է, զով և խոնավ: Եղանակը փոփոխական է:

Ռելիեֆը՝

Ծաթեր համայնքը տեղակայված է Լոռվա սարահարթում, ռելիեֆը սարահարթավայրային է, հյուսիս-արևելյան կողմը շրջապատված է լեռներով: Նպաստավոր պայմաններ կան գյուղատնտեսության զարգացման համար /կարտոֆիլ, հացահատիկ, եգիպտացորեն/

Համայնքն իր վարչական սահմաններով սահմանակից է Թումանյան, Ջորագետ, Այգեհատ, Արևածագ համայնքներին:

Պատմամշակութային հուշարձանները տարբեր են ըստ կառուցման ժամանակահատվածի. ավելի բազմազան են 13-14-րդ դարերի հուշարձանները: Համայնքն ունի մեկ մատուռ:

2002թ.-ին ՀՀ կառավարության կողմից հաստատված պատմության և մշակույթի հուշարձանների ցանկում՝ Ծաթեր համայնքում ներառված է 2 հուշարձան և 5 խաչքար:

Համայնքի բնակչությունը կազմում է 391 մարդ, որից տղամարդ՝ 197, կին՝ 194:

Բնակչության սոցիալական կազմը հետևյալն է՝

- երեխաներ մինչև 4 տարեկան – 18
- դպրոցականներ – 41
- բնակչություն 16 – 65 տարեկան - 357
- թոշակառուներ – 82

Աշխատունակ բնակչության թիվը կազմում է 128 մարդ:

Գյուղը բաղկացած է 100 ընտանիքից, որոնցից 9-ը ընդգրկված են և օգտվում են <<Փարոս>> ծրագրից:

2.2 ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ

ՀՀ Լոռու մարզի Ծաթեր համայնքի 2017 թ-ի վարչական բյուջեն կազմում է 9542000 ՀՀ դրամ, որտեղ համայնքի սեփական եկամուտների բաժինը կազմում է 58.1%, իսկ ընդհանուր բյուջեն ֆոնդային բյուջեի հետ միասին կազմում է 11824110 ՀՀ դրամ

Գյուղի բնակիչները մասնավորապես զբաղվում են անասնապահությամբ, կարտոֆիլի, հացահատիկային և կերային կուլտուրաների մշակմամբ: Համայնքում գյուղատնտեսական արտադրանքի 55 %-ը բաժին է ընկնում բանջարաբուծությանը, իսկ մնացածը՝ անասնապահությանը:

Գյուղատնտեսական արտադրանքի հիմնական մասը սպառվում է Ալավերդի քաղաքի շուկաներում և խանութներում:

Համայնքի վարչական տարածքում գործող պետական կազմակերպություններն են՝ համայնքի հիմնական դպրոցը, բուժկետը: Այս կազմակերպությունների հետ ՏԻՄ-ը արդյունավետորեն համագործակցել է, արվել է հնարավորը՝ կրթության և առողջապահության ոլորտներում ծառայությունների արդիականացման և արդյունավետության բարձրացման նպատակով:

Ծաթերի հիմնական դպրոցում սովորում են 41 աշակերտ: Գյուղից աստիճանական արտագաղթն իր բացասական ազդեցությունն է թողել նաև դպրոցի աշակերտների թվի վրա, որը վերջին տարիներին անընդհատ նվազել է: Դպրոցում կա 24 աշխատող, որոնցից 14-ը մանկավարժ են: Անգլերեն և ռուսերեն լեզուներ, աշխարհագրություն, ֆիզկուլտուրա առարկաներ դասավանդող ուսուցիչները գալիս են հարևան համայնքից: Դպրոցի շենքի տանիքը կարիք ունի հիմնանորոգման: Ձմռանը դպրոցի շենքը ջեռուցվում է բնական գազով: Գյուղում մանկապարտեզ և կրթական այլ հաստատություններ չկան:

Համայնքի մշակույթի տան շենքում է գտնվում բուժկետը՝ իր բոլոր հարմարություններով, ապահովված առաջին բուժօգնության պարագաներով և խմելու ջրի ջրամատակարարմամբ: Աշխատում է 1 բուժքույր:

Ընտանեկան նպաստի համակարգում գրանցված ընտանիքների թիվը՝9:

2.3 ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ

- Ներհամայնքային փողոցների լուսավորության անցկացում:
- Համայնքի հնգամյա զարգացման ծրագրով նախատեսվում է պետության աջակցությամբ կամ այլ ծրագրերով կառուցել ոռոգման ցանց: Ծրագրի իրականացման համար համայնքը պատրաստ է կատարել իր ներդրումը ֆինանսապես և աշխատուժի տեսքով: Ոռոգման համակարգի կառուցումը զարկ կտա գյուղատնտեսության զարգացմանը:
- Նախատեսվում է նորոգել ներհամայնքային ճանապարհները:
- Համայնքի զարգացման համար մեծ ազդեցություն կունենա նոր գյուղտեխնիկայի ձեռքբերումը և հակակարկտային կայանների ավելացումը:

2.4 ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ

Կատարելով համայնքի 2017-2021թթ. բյուջեների մուտքերի կանխատեսումները՝ պետք է հաշվի առնել երեք հանգամանք՝

1)Համայնքի բյուջեի մուտքերի կանխատեսման համար որպես ելակետային տվյալներ են ընդունվել համայնքի 2015- 01.12.2016թթ. բյուջեների մուտքերի փաստացի գանձման ցուցանիշները՝յուրաքանչյուր տարի նախատեսելով որոշակի աճ:

Մուտքերի աճը նախատեսվել է՝հիմք ընդունելով համայնքի հետագա զարգացման հետ կապված պատկերացումներն ու ակնկալիքները, նոր ծառայությունների մատուցման անհրաժեշտությունը և դրանց դիմաց վճարների գանձման հնարավորությունները և այլն:

2) ՀՀ պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների գումարները կանխատեսելու համար, հիմք է ընդունել ըստ տարիների կանխատեսվող բնակչության թվաքանակը:

3) Հաշվի առնել համայնքի սեփական եկամուտների ՝ հողի հարկի գույքահարկի և այլ գույքի վարձավճարների նվազող ապառքները ապառքները. որը կհավասարվի զրոյի և որպես սեփական եկամուտ կհաշվարկվի միային ընթացիկ տարվա համար, առանց նախորդ տարվա ապառքի:

- *Ներկայացված ծրագրերի իրագործման համար անհրաժեշտ է համայնքի ֆինանսական միջոցների ճիշտ գնահատումը և կանխատեսումը:*
- *Լոռու մարզի Ծաթեր համայնքի եմանուտները և կանխատեսումը՝ հազար դրամ .*

h/h	եկամտի անվանումը	2015թ. փաստ.	2016թ. 01.12.2016 դրությամբ փաստ.	2017թ կանխ.	2018թ. կանխ.	2019թ. կանխ.	2020թ. կանխ.	2021թ. կանխ.
1.	Հողի հարկ	2591.5	2237.3	3106.7	2900.0	2850.0	2850.0	2850.0
2.	Գույքահարկ	539.1	395.2	945.4	720.0	650.0	650.0	650.0
3.	Պահ. Հողերի և այլ գույքի վարձ/վճ	1169.4	786.1	1407.2	1160.0	1158.0	1158.0	1158.0
4.	Տուրքերև վճարներ	36.0	5.0	20.0	20.0	20	20	20
Ընդ. Սեփական եկամուտներ		4336.0	3423.6	5479.3	4800.0	4678.0	4678.0	4678.0
5.	Պաշ.տրանսֆերտներ դոտացիա	5577.0	4981.1	4001.4	4005.0	4002.0	4002.0	4002.0
Ընդամեն եկամուտներ		9913.0	8404.7	94807.0	8805.0	8680.0	8680.0	8680.0

2.5 ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ ԵՎ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ծաթեր համայնքի առջև ծառացած հիմնական խնդիրները խոչընդոտում են համայնքի զարգացմանը.
Ձեռնարկատիրության խթանմանը, ինչպես նաև գյուղատնտեսության զարգացմանը խոչընդոտող հանգամանք է հանդիսանում համայնքում ոռոգման համակարգ չլինելը, ինչի պաճառով համայնքի բնակչությունը հողագործությունից մեծ եկամուտներ չի կարողանում ստանալ: Ոգոգման ցանցի բացակայության պատճառով գրեթե 95% հողատարածքներ ընդհանրապես չեն ոռոգվում, ինչը բերում է բերքի բավականին մեծ քանակությամբ կորստի՝ հատկապես երաշտի ժամանակ:
Գյուղատնտեսության զարգացման համար համայնքում խոչընդոտ են հանդիսանում նաև գյուղտեխնիկայի բացակայությունը, հակակարկտային կայանների պակասը, արտադրանքի իրացման դժվարությունները: Համայնքի բնակիչներն ունեն լուրջ խնդիրներ ու դժվարություններ արտադրված գյուղատնտեսական մթերքների իրացման հարցում:
Համայնքում ցանկություն կա ավելի զարգացնել անասնապահության ճյուղը: Սակայն դրա հետագա զարգացման համար համայնքում չկան բավարար խոտհարքներ և արոտավայրեր:
Վերը նշվածի հետևանքով համայնքում բնակչության կենսամակարդակը ցածր է, համայնքի սեփական եկամուտների հավաքագրումը դժվարանում է: Մեծանում է արտագաղթի վտանգը:
Աղբամանների և աղբահավաք մեքենայի բացակայությունը բացասաբար է անդրադառնում համայնքի արտաքին տեսքի և սանիտարահիգիենիկ պայմանների վրա: Համայնքի տնային տնտեսություններն իրենց արտադրած կենցաղային աղբը թափում են գյուղից ոչ հեռու հատկացված վայրում: Համայնքն իր ուժերով ի վիճակի չէ լուծելու աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների կազմակերպումը, այդ ուղղությամբ անհրաժեշտ է պետական մարմինների աջակցությունը նոր աղբավայրի կառուցման և աղբատար մեքենայի ձեռք բերման հարցում:
Համայնքի բյուջեի սղության պատճառով համայնքում չկա գործող նախադպրոցական կրթական հաստատություն, ինչը խոչընդոտում է ծնելիության խթանմանը:
Համայնքի զարգացման համար խոչընդոտ է հանդիսանում ներդրումների բացակայությունը: Կարևոր է բարեգործության խթանումը և այլ ծրագրերի ներգրավումը:

2.6 ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԻ, ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԻ /ՈՒԹՀՍ/ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

1. Համայնքի ուժեղ կողմերը

1.2 Համայնքում գյուղատնտեսության զարգացման համար առկա հողային բավականին մեծ ռեսուրսների առկայությունը:

1.3 Համայնքի համեմատաբար բարենպաստ կլիման, գեղեցիկ բնությունը և չքնաղ Լոռվա ձորը:

1.4 Համայնքի խմելու ջրի վերջերս փոխարինված նոր պոլիէթիլային խողովակով ներհամայնքային համակարգերի առկայությունը, որն ունի ջրամատակարարման շուրջօրյա սպասարկում:

1.5 Համայնքը գազաֆիկացված է:

1.6 Միջհամայնքային ճանապարհները ասֆալտապատ են:
1.7 Համայնքն ունի մշակութային կենտրոն և նորակառույց հանդիսությունների սրահ: Մշակույթի տունը (որտեղ գտնվում են համայնքապետարանը, գրադարանը, բուժկետը, փոստի բաժանմունքը) և հանդիսությունների սրահը հագեցած են անհրաժեշտ գույքով և պարագաներով:
1.8 Համայնքն ունի ֆուտբոլային մարզադաշտը, որտեղ կազմակերպվում են ֆուտբոլի մրցումներ տարբեր համայնքների թիմերի միջև:
1.9 Համայնքի հիմնական դպրոցի մարզադահլիճը գտնվում է բարվոք վիճակում, որտեղ կազմակերպվում է բասկեբոլի և վոլեյբոլի մրցումներ հարևան համայնքների միջև:
1.10 Համայնքի հարակից տարածքներում կան հանգստի գոտիներ և գեղեցիկ հուշաղբյուրներ, որտեղ համայնքի բնակիչները և շատ զբոսաշրջիկներ անց են կացնում իրենց հանգիստը:
1.11 Մշակույթի տան հարևանությամբ է գտնվում 2012 թվականին ծրագրով (ծրագրի արժեքը 5000000 ՀՀ դրամ, որից 30%-ը՝ համայնքի կողմից) կառուցված մանկական խաղահրապարակը, որը հագեցած է անհրաժեշտ գույքով: Այն հիմնականում ծառայում է ինչպես համայնքում բնակվող երեխաների, այնպես էլ ամառը համայնք հյուր եկած փոքրիկների համար:

2. Համայնքի թույլ կողմերը

2.1 Ներհամայնքային ճանապարհների անբարեկարգ վիճակը:

2.2 Համայնքի որոշ թաղամասերի արտաքին (գիշերային) լուսավորության անբավարար վիճակ:
2.3 Մշակույթի տան տանիքի անմխիթար վիճակ:

2.4 Գյուղտեխնիկայի պակաս:

2.5 Անհրաժեշտ քանակի (անհրաժեշտ քանակը 3 միավոր, համայնքը ունի 1 -ը) հակակարկտային կայանների բացակայությունը:
2.6 Համայնքի վարչական տարածքում ԽԵԿ համար բարենպաստ տեղանքում արոտավայրերի բացակայությունը:
2.7 Համայնքում աղբահանության ծառայության կազմակերպման փոքր մասշտաբ, աղբավայրի, աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների մատուցման համար ֆինանսական հնարավորությունների բացակայությունը:
2.8 Ջրահեռացման կենտրոնացված համակարգի (կոյուղու) բացակայություն:

2.9 Ոռոգման համակարգի բացակայությունը:
2.10 Համայնքում արտադրված գյուղատնտեսական մթերքներն իրացնելու դժվարության առկայությունը:
2.11 Համայնքում սոցիալապես խոցելի ընտանիքների մեծ թիվ:
2.12 Մանկապարտեզի բացակայություն

2.13 Համայնքից տարեցտարի շարունակվող արտագաղթը՝ իր բոլոր բացասական հետևանքներով:

3. Համայնքի հնարավորությունները

3.1 Համայնքի աշխարհագրական լավ դիրքը, (մոտիկությունը մարզկենտրոն Վանաձորին, տարածաշրջանային կենտրոն Ալավերդուն, համայնքի տարածքով անցնող հանրապետական նշանակության Վանաձոր-Ալավերդի ճանապարհը)
3.2 Գյուղատնտեսության զարգացում

3.3 Համախմբել համայնքում մարդկային, գույքային ու ֆինանսական ռեսուրսները և ապահովել օրենքով ՏԻՄ-ին վերապահված սեփական լիազորությունների ամբողջական ու լիարժեք իրականացումը:

3.4 Խելամտորեն օգտագործել համայնքին առաջարկվող լավ հնարավորությունները, ուղիներ գտնել ներգրավելու ՀՀ կառավարության, միջազգային դոնոր և տեղական կազմակերպությունների ուշադրությունը, առաջարկել կազմել համատեղ ծրագրեր դրսի ֆինանսական օգնությամբ և համայնքի բյուջեից պահանջվող ներդրման գումար առկայությամբ, աստիճանաբար լուծել համայնքում առկա խնդիրները:

4 . Համայնքի սպառնալիքները

4.1 Կարկտահարության, ցրտահարության սպառնալիք

4.2 Ոռոգման համակարգի վատթար վիճակ

4.3 Արտագաղթ

3. ՀԱՄԱՅՆՔԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

Ծաթերի ՀՀԶԾ-ի նպատակների և գործողությունների սահմանման, անհրաժեշտ ռեսուրսների հաշվարկման հերթականությունը:

- Նպատակների, զարգացման տեսլականի սահմանում
- Գործողությունների պլանավորում
- Անհրաժեշտ ռեսուրսների հաշվարկ

3.1 ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՍԼԱԿԱՆ

Համայնքի տեսլականն է՝

ՀՀ Լոռու մարզի Ծաթեր համայնքը առաջիկա հինգ տարիների ընթացքում դարձնել գյուղատնտեսական մթերքների արտադրության, կրթական և մշակութային զարգացած ենթակառուցվածքներ, բնակչության համար բավարար կենսապայմաններ ունեցող տարածք:

- Համայնքի զարգացման հիմնական ուղղություններն են.

1. Համայնքում անասնապահության զարգացում և անասնապահական մթերքների արտադրության ծավալների աստիճանական մեծացում՝ անասնագլխաքանակի տարեցտարի ավելացման և անհրաժեշտ քանակությամբ անասնակերի ապահովման միջոցով,
2. Համայնքում մեղվապահության ընդլայնում և էկոլոգիապես մաքուր մեղրի արտադրության աստիճանական զարգացում,

3. Համայնքի սեփականություն համարվող ենթակառուցվածքների պահպանում, շահագործում, նորոգում և զարգացում: Մասնավորապես մշակույթի տան տանիքի վերանորոգում: Համայնքը նախատեսել է 280 000 դրամ, ինչպես նաև կապահովի աշխատուժը: Խնդրի լուծման դեպքում կփրկենք համայնքի մշակույթի տան (տարածաշրջանում իր հավասարը չունեցող) տիպային շենքը անձրևաջրերի և ձմռանը ձնհալից առաջացած ջրերի ներս թափանցումից, որը պատճառ կդառնա ամբողջ կառույցի ներքին պատերի և առաստաղի քայքայմանը: Այն վերջերս է վերանորոգվել (կառավարության աջակցությամբ շուրջ 100000 ԱՄՆ դոլար)՝ եվրո պատուհաններով և դռներով, բաքսի երկու կաթսայանոց ջեռուցման համակարգով:
4. Ներհամայնքային ճանապարհների նորոգում և բարեկարգում, ջրահեռացման և արտաքին լուսավորության համակարգերի անցկացում: Խնդրի լուծման դեպքում կունենանք բարեկարգված ներհամայնքային ճանապարհներ, անկախ եղանակային պայմաններից՝ բոլորին հասանելի կլինի անվտանգ երթևկությունը, կնվազի մեքենաների պահպանման ծախսերը, կբարելավվի բնակիչների կենսամակարդակը:
5. Ոռոգման ջրահամակարգը հիմնանորոգելու արդյունքում կավելանա հողերի մշակման ծավալը, ինչը կապահովի բնակիչների զբաղվածության ավելացումը և կխթանի բանջարաբուծությանը և համայնքից միգրացիայի նվազեցմանը, բնակչության թվաքանակի կայունացմանը:
6. Նոր գյուղտեխնիկայի ձեռքբերում: Նախատեսվում է պետական աջակցություն և դոնոր կազմակերպությունների ներգրավում: Խնդրի լուծման դեպքում կբարձրանա հողերի մշակման արդյունավետությունը, կավելանա ստացված բերքի որակը և քանակը, կհեշտանա բնակիչների աշխատանքը:
7. Հակակարկտային կայանների ավելացում: Տրամադրվող գումարի հարցը նախատեսվում է այլ ծրագրերով: Խնդրի լուծման դեպքում կնվազի համայնքի սպառնալիք հանդիսացող կարկուտի հետևանքով ցանքերի ոչնչացման հավանականությունը:

Համայնքի զարգացման հնգամյա ծրագրի իրականացումը նախատեսում է անհրաժեշտ ռեսուրսները, գործողությունները, ուղղակի արդյունքները, ծրագրի անմիջական և հեռահար նպատակները, որոնց ամբողջությունը ծրագրի տրամաբանական հենքն է:



գործողությունները, ապա կկարողանանք տրամադրել անհրաժեշտ ծառայությունները կամ ապրանքը:

↓

Անմիջական նպատակ. Եթե պլանավորված գործողությունները իրականացնենք ցանկալի աստիճանով, ապա ծրագրի շահառուները դրանցից որոշակի օգուտ կքաղեն:

↓

Հեռահար նպատակ. Եթե շահառուները շահեն ծրագրից, ապա համայնքում փոփոխություններ տեղի կունենան:

Յուրաքանչյուր տարվա կտրվածքով՝
ա/ համայնքում աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների թվի նվազման-3%
բ/սեփական եկամուտների աճի-10%
գ/ բնակիչների թվի ավելացման-1%
և կապահովվի համայնքի կայուն զարգացումը:

3.2 ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ

ՀՀ Լոռու մարզի Ծաթեր համայնքի հնգամյա զարգացման ծրագրի շրջանակներում խնդիրների լուծման համար համայնքը սահմանել է անմիջական նպատակներ, որոնք իրականացնելով՝ կերաշխավորվի համայնքի հեռահար նպատակների իրագործումը և կապահովի համայնքի կայուն զարգացում:

2017-2021թ.թ. ընթացքում համայնքի ՏԻՄ-ը նախատեսում է լայնորեն համագործակցել պետական կառավարման մարմինների, միջազգային և տեղական կազմակերպությունների, և այլ շահագրգիռ կողմերի հետ:

Համայնքում պետության կողմից ներդրումներ ապահովելու նպատակով, նախատեսվում է սերտ համագործակցություն ՀՀ Լոռու մարզպետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների հետ:

Համայնքի զարգացման անմիջական նպատակներն են.

1. Համայնքի գույքի կառավարում
2. Նախադպրոցական կրթության և արտադպրոցական դաստիարակության կազմակերպում
3. Ակտիվ մշակութային և մարզական կյանքի կազմակերպում՝ երիտասարդության ներգրավմամբ:
4. Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանություն

5. Ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսում
6. Համայնքի բնակավայրերի կառուցապատում, բարեկարգումը և կանաչապատումը, համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը, համայնքային գերեզմանատների պահպանումը և գործունեության ապահովումը:
7. Մարզկենտրոն Վանաձորի, տարածաշրջանային կենտրոն Ալավերդու և Ծաթեր համայնքի հետ մշտական հասարակական տրանսպորտային հաղորդակցության կազմակերպում և շահագործում՝ համագործակցության ներգրավումով մարզի մասնավոր տրանսպորտային կազմակերպություններին: Համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանում և շահագործում:
8. Պետության պաշտպանության իրականացման աջակցում
9. Աղետի ռիսկերի նվազեցում և արտակարգ իրավիճակներում բնակչության ու քաղաքացիական պաշտպանության իրականացում: Աղետների ռիսկի կառավարման ոլորտում համայնքի բնակչության լայն իրազեկում, արտակարգ իրավիճակներում համայնքի գործողությունների պլանի կազմում և իրականացում, կանխարգելիչ միջոցառումների կազմակերպում և իրականացում
10. Համայնքում գյուղատնտեսության զարգացում՝ պարարտանյութերի, թունաքիմիկատների, սերմացուի, գյուղտեխնիկայի ձեռքբերման, գյուղացուն ձեռնտու պայմաններով (երկարաժամկետ, շուկայականից ցածր տոկոսադրույքով, առանց գրավի) գյուղատնտեսական վարկերի տրամադրման, գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպման, խորհրդատվության ու աջակցության և այլ ուղղություններով:
11. Շրջակա միջավայրի պաշտպանություն
12. Երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումներ
13. Բնակչության առողջական մակարդակի բարձրացում: Առողջապահության և սոցիալական պաշտպանության ոլորտներում համայնքի բնակչությանը հանրային ծառայությունների հասանելիության և մատուցման մակարդակի բարձրացում՝ պետական պատվերի շրջանակներում:
14. Բարեգործության խթանում:

ԾՐԱԳԻՐ 1.

Մշակույթի տան տանիքի վերանորոգում 2017թ. ընթացքում
/Ոլորտի անվանումը/

§Մշակույթի տան տանիքի ներկում /980քմ/
/Ծրագրի անվանումը/

Ծաթերի համայնքապետարան
/Ծրագրի իրականացման համար համայնքի պատասխանատուն/
Ծրագրի ընդհանուր արժեքը 415 000 ՀՀ դրամ

Ծրագրի հիմնավորումը՝ ԵՇՄ տանիքը գտնվում է անմխիթար վիճակում, լինելով կառուցված ացինկովի բարակ թիթեղից՝ տարիների ընթացքում ենթարկվել է կոռոզիայի, ինչը կհանգեցնի անձրևաջրերի և ձմռանը ձնհալից առաջացած ջրերի ներս թափանցմանը, որը պատճառ կդառնա ամբողջ կառույցի ներքին պատերի և առաստաղի քայքայմանը:

Ծրագրի նպատակները՝ Ծրագրի նպատակն ¿ փրկել համայնքի մշակույթի տան (տարածաշրջանում իր հավասարը չունեցող) տիպային շենքը, որը վերջերս է (կառավարության աջակցությամբ շուրջ 100000 ԱՄՆ դոլար) վերանորոգվել՝ եվրո պատուհաններով, դռներով բաքսի երկու կաթսայանոց ջեռուցման համակարգով:

Ծրագրի խնդիրները՝ Աշխատանքներ տանել համայնքի ակտիվ խմբերի հետ, ովքեր ցանկություն կհայտնեն ներդրում կատարել աշխատուժի տեսքով, կազմել 5-6 հոգիանոց աշխատանքային խումբ, ձեռք բերել գրավոր համաձայնագիր, կնքել պայմանագիր պահանջվող աշխատանքների կատարման մասին: Կազմել ծրագրի բյուջեն:

Ծրագրի ակնկալվող արդյունքները՝ Կկանխվի տանիքից ջրերի ներս թափանցմանը՝ արդյունքում կփրկվի մշակույթի տան շենքը՝ որտեղ տեղակայված են համայնքապետարանը, փոստային բաժանմունքը, բուժկետը, ավագանուն հատկացված սենյակ- փոքր դահլիճը, 300 տեղանոց մեծ դահլիճը՝ կահավորված բեմով:

ԾՐԱԳԻՐ 2.

2018 -2019 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ոռոգման ցանցի կառուցում

Համայնքում բերքի պահպանման հարցը խոցելի է: Հաճախ կրկնվող երաշտների պատճառով գյուղացին կորցնում է իր արտադրանքի կեսից ավելին, որը նպաստում է բարձր ինքնարժեքի առաջացմանը՝ գրեթե հավասարեցնելով շուկայական արժեքին: Այն ազդում է գյուղացու ֆինանսական վիճակին և կյանքի զարգացմանը: Ոռոգման ցանցի առկայության դեպքում բարձր բերքատվությունը երաշխավորված է:

Ոռոգման ցանցի (ոռոգվող տարածքը՝288 հա) կառուցում:

/Ոլորտի անվանումը/

§Ոռոգման ցանցի կառուցում՝

/Ծրագրի անվանումը/

Ծաթերի համայնքապետարան

/Ծրագրի իրականացման համար համայնքի պատասխանատուն/

Ծրագրի ընդհանուր արժեքը՝ 28 000 000 ՀՀ ¹ñ³Ù

Ծրագրի հիմնավորումը՝ Համայնքի 329 հա վարելահողից 288 հա համարվում է ոռոգվող, համայնքի բնակչության հիմնական եկամուտը գյուղատնտեսությունն է, անհրաժեշտ է ապահովել առավել բարձր բերքատվություն, ստեղծել բարենպաստ պայմաններ համախառն արտադրանքի բարձրացմանը խթանելուն, ինչի կարևոր գործոններից է ոռոգման ցանցի առկայությունը:

Ծրագրի նպատակները՝ կանխել երաշտ կամ քիչ տեղումներ տեղացող տարիներին բերքի կորուստը, ստեղծել պայմաններ մարդկանց սոցիալական պայմանները բարելավելուն, կանխել արտագաղթը:

Ծրագրի խնդիրները՝ Ակնկալել և աշխատանքներ տանել ծրագիր իրականացնող դոնոր կազմակերպությունների հետ, կնքել պայմանագիր, կազմել ծրագիրի բյուջե: Համայնքից պահանջվող ներդրումը՝ նախատեսել համայնքի բյուջեում, ներգրավել արտերկրում ապրող համագյուղացիներին ֆինանսական ներդրում կատարելու համար և աշխատանքներ տանել համայնքի ակտիվ խմբերի հետ, ովքեր ցանկություն կհայտնեն ներդրում կատարել աշխատուժի տեսքով: Կազմել 10-12 հոգանոց աշխատանքային 5-ական խմբեր, ձեռք բերել գրավոր համաձայնագիր, կնքել պայմանագիր պահանջվող աշխատանքների կատարման մասին: Կազմել ծրագրի բյուջեն:

ԾՐԱԳԻՐ 3.

2019 թվականի համար

Համայնքի ներհամայնքային ճանապարհների նորոգում

/Ոլորտի անվանումը/

§Խճապատում և ավազապատում՝

/Ծրագրի անվանումը/

Ծաթերի համայնքապետարան

/Ծրագրի իրականացման համար պատասխանատուն/

Ծրագրի ընդհանուր արժեքը 459000 ¹ñ³Ù

Ծրագրի հիմնավորումը՝ Համայնքում կա շուրջ 52 մարդատար մեքենա: Շուրջ 4.5 կմ ընդհանուր երկարությամբ ներհամայնքային ճանապարհները գտնվում են անմխիթար վիճակում, անհրաժեշտ է կատարել փոսալցում, կանխել մեծ փոսերի առաջացումը: Ներհամայնքային ճանապարհների բարվոք վիճակը կապահովի թեթև մարդատար մեքենաների հեշտ, անվտանգ շարժը:

Ծրագրի խնդիրները՝ Աշխատանքներ տանել, ձեռք բերել պայմանավորվածություն և դրսից ներգրավել 2 միավոր տեխնիկա (բարձող և տեղափոխող), քանի որ համայնքը չունի նման տեխնիկա: Նախօրոք կնքել համաձայնություն վերանորոգվող հատվածի հարևանությամբ ապրող բնակիչների հետ, ովքեր ցանկություն կհայտնեն կատարել ներդրում աշխատուժի տեսքով, ձեռքով կատարել փոսալցում: Կազմել ծրագրի բյուջեն պահանջվող բոլոր հավելվածներով:

Ծրագրի ակնկալվող արդյունքները՝ Կունենանք բարեկարգված ներհամայնքային ճանապարհներ, անկախ եղանակային պայմաններից՝ բոլորին հասանելի կլինի անվտանգ երթևկությունը, կնվազի մեքենաների պահպանման ծախսերը : Կբարելավվի բնակիչների կենսամակարդակը:

ԾՐԱԳԻՐ 4.

2020 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

Համայնքի գիշերային լուսավորության ցանցի ավելացում

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Համայնքի փողոցների լուսավորությունը ևս բնակիչների կյանքի, կենցաղի բարեփոխումներից է, այդ իսկ պատճառով գյուղի փողոցների գիշերային ժամերին լուսավոր լինելը կարևոր է

բնակիչների առավել անվտանգ տեղաշարժի համար: Ներկայումս լուսավորվում է գյուղի 60% -ը, ինչը կազմում է 30 հատ լուսատու :

Ծրագրի ընդհանուր արժեքը 120 000 ՀՀ ¹ñ³Ù

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Գիշերային լուսատուների քանակությունն ավելացնելով մինչև 60 հատ՝ գյուղի լուսավորության խնդիրը լուծվում է 100 % -ով, ինչը բնակիչների կյանքի և կենցաղային պայմանների բարելավում է:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԳՈՐԾՈՒՄԸ

Կազմակերպությունների կամ պետական ծրագրերի աջակցություն և համայնքի կողմից համապատասխան ֆինանսական ներդրումներ ծրագրի իրագործման համար:
Վերը նշված ծրագրերի իրագործումը կհանգեցնի համայնքի ընդհանուր զարգացմանը, բնակչության կյանքի մակարդակի բարձրացմանը , կենցաղային պայմանների բարելավմանը.

ԾՐԱԳԻՐ 5.

2021 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

Մաշված , ոչ սարքին գյուղտեխնիկայի օտարում՝ նորի ձեռք բերման նպատակով

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Նախկին տնտեսության լուծարման գործընթացից համայնքապետարանին որպես սեփականություն հասել է գյուղտեխնիկա ՝ խոտհնձիչ կոմբայն 1 հատ, հատիկ հավաքող կոմբայն 1 հատ, տրակտորներ : Վերը նշված տեխնիկան շահագործելու, վերանորոգելու, սարքին պահելու համար մեծ ծախսեր է անհրաժեշտ, ինչպես նաև ընդունելով մշակվող տարածքների չափերը, մասնավոր լինելու հանգամանքը, ճիշտ է ձեռք բերել չափերով փոքր, քիչ վառելիք օգտագործող ժամանակակից գյուղտեխնիկա, որը շահագործման համար մատչելի է և տնտեսող, ինչը չի կարելի նշել ներկա, լավագույն դեպքում՝ գործող տեխնիկայի մասին:
Ծրագրի ընդհանուր արժեքը՝ 20 000 000 ՀՀ ¹ñ³Ù

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Համայնքում գյուղատնտեսության զարգացում, գյուղական մթերքի որակի և քանակի ավելացման նպատակներով օտարել ոչ սարքին և առավել մաշված գյուղտեխնիկան:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԳՈՐԾՈՒՄԸ

Կազմակերպությունների կամ պետական ծրագրերի աջակցություն և համայնքի կողմից՝ ոչ սարքին և առավել մաշված գյուղտեխնիկայի օտարումից առաջացած ֆինանսական միջոցներ՝ համայնքում անհրաժեշտ նոր գյուղտեխնիկայի ձեռքբերման նպատակով:

ԾՐԱԳԻՐ 6.

2021 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

Բերքի պահպանման համար անհրաժեշտ են հակակարկտային կայաններ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Համայնքում բերքի պահպանման հարցը խոցելի է : Հաճախ տողացող կարկուտի պատճառով բերքի կորստի չափերը զգալի են, ինչը բացասաբար է ազդում գյուղացու ֆինանսական վիճակին և կյանքի զարգացմանը: Հակակարկտային կայանների առկայության դեպքում բերքի 70%-ը կարելի է համարել երաշխավորված:

Ծրագրի ընդհանուր արժեքը՝ 415 000 ՀՀ ¹ñ³Ù

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1 միավոր հակակարկտային կայանի գործողության շառավիղը 80 հա է, իսկ արժեքը՝ 500 հազար ՀՀ դրամ: Ծաթեր համայնքի մշակվող տարածքը 329.9 հա է, որից միամյա ցանքսերը շուրջ 288 հա: Ամբողջը պահպանելու համար անհրաժեշտ է 3 միավոր հակակարկտային կայան: Համայնքն ունի 1 միավոր, անհրաժեշտ է այս հնգամյա զարգացման ծրագրով ձեռք բերել ևս 1 միավոր:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԳՈՐԾՈՒՄԸ

Կազմակերպությունների կամ պետական ծրագրերի աջակցություն և համայնքի կողմից ոչ սարքին և առավել մաշված գյուղտեխնիկայի օտարումից առաջացած համապատասխան ֆինանսական ներդրումներ՝ ծրագրի իրագործման համար:

4. ՀՀԶԾ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

Ծաթեր համայնքի ՀՀԶԾ-ում ընդգրկված ծրագրերը նախատեսված է իրականացնել.

- Համայնքի սեփական միջոցներով
- Ներքին պաշտոնական դրամաշնորհներով
- Պետություն-համայնք-մասնավոր հատված համագործակցության շրջանակներում մասնավոր ընկերությունների կողմից արված ներդրումներ
- Բարեգործություն և նվիրատվություն
- Այլ աղբյուրներ

ՀՀԶԾ-ում ընդգրկված ծրագրերի իրականացման համար առկա և անհրաժեշտ ֆինանսական միջոցները ներկայացված են ՀՀԶԾ –ի ծրագրի անձնագրերում:

Համայնքը իր միջոցներով պատրաստ է իրականացնել հետևյալ ծրագրերը.

1. Մշակույթի տան տանիքի վերանորոգում
   Համայնքի մշակույթի տան տանիքը՝ 980 քմ մակերեսով, կմաքրվի և կներկվի, որի համար համայնքի բյուջեից 2017 թվականի համար նախատեսվել է 280 000 դրամ: Մնացած մասով կկատարվի ներդրում աշխատուժի տեսքով:
2. Ներհամայնքային ճանապարհների նորոգում, որի համար համայնքի բյուջեից նախատեսվել է 256 000 դրամ, իսկ 203 000 դրամը՝ ներդրում աշխատուժի ներգրավմամբ:
3. Ներհամայնքային փողոցների լուսավորության անցկացում, որի համար համայնքի բյուջեից նախատեսվում է 120 000 դրամ,
4. Հակակարկտային կայանի ձեռքբերում, որի համար համայնքի 2021 թ.-ի բյուջից նախատեսվում է 500 000 ՀՀ դրամ:

Պետություն-համայնք-մասնավոր հատված համագործակցության շրջանակներում, այլ ծրագրերով համայնքը նախատեսում է իրականացնել.

1. Ոռոգման ցանցի կառուցում գումարը -28 000 000 ՀՀ դրամ, որից.
   համայնքի ֆոնդային բյուջեից – 5 000 000 ՀՀ դրամ, աշխատուժի տեսքով ներդրում՝ 750 000 ՀՀ դրամ
   այլ ծրագրերով –22250000 ՀՀ դրամ /գումարի հարցը լուծված չէ/
2. Ժամանակակից գյուղտեխնիկայի ձեռքբերման համար անհրաժեշտ գումար-20 միլիոն ՀՀ դրամ
   Համայնքի ֆոնդային բյուջեից – 6 միլիոն ՀՀ դրամ
   Այլ ծրագրերով – 14 միլիոն ՀՀ դրամ /գումարի հարցը լուծված չէ/

5.ՀՀՀԶԾ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ

ՀՀՀԶԾ մոնիթորինգի ծրագիրը, մոնիթորինգի ենթարկվող ցուցանիշները, ցուցանիշների հավաքագրման հաճախականությունը, տեղեկատվության աղբյուրներն ամփոփված է ՀՀՀԶԾ մոնիթորինգի անձնագրում:

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ

„Մշակույթի տան տանիքի 980 քմ-ի ներկում„

(Ծրագրի անվանում)

<table>
<tr><td>Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը</td><td colspan="7">Մշակույթի տան շենքի պահպանում:</td></tr>
<tr><td rowspan="4">Ծրագրի անմիջական նպատակ</td><td colspan="7">Համայնքի զարգացում</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="6">Թիրախային արժեքներ/հազար դրամ/</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td></td><td>415.0</td><td></td><td></td><td></td><td></td></tr>
<tr><td rowspan="6">Ծրագրի միջանկյալ արդյունքներ</td><td colspan="7">1.</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="6">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td></tr>
<tr><td colspan="7">2.</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="6">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական գործողությունները</td><td colspan="7">1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ
1.1. Մշակույթի տան շենքի պահպանում:
1.2.

2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ
2.1.Նախահաշիվ
2.2. Բանակցություններ համայնքի ակտիվ խմբերի հետ, արդյունքում ներդրում աշխատուժի տեսքով:</td></tr>
<tr><td>Ծրագրի բյուջեն</td><td colspan="7">Ընթացիկ ծախսեր՝ 415.0 /հազար դրամ/
Կապիտալ ծախսեր՝
Ընդհանուր բյուջեն՝ 415.0.2 /հազար դրամ/</td></tr>
<tr><td>Ծրագրի իրականացման համար անհրաժեշտայլ ռեսուրսներ</td><td colspan="7">Համայնքի բյուջե՝ 280.0/հազար դրամ/
Ներդրում աշխ. ուժի տեսքով 135.0/հազար դրամ/</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական ռիսկերը</td><td colspan="7">Ֆինանսավորման հարցը լուծված է /գնում է բանակցություններ/</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական շահառուները</td><td colspan="7">Համայնքի բնակիչներ</td></tr>
<tr><td>Ծրագրի սկիզբ և ավարտ</td><td colspan="7">01.06.2017թ-01.08.2017թ.</td></tr>
<tr><td>Ծրագրի համառոտ նկարագրություն</td><td colspan="7">ԴՇՄ տանիքը գտնվում է անմխիթար վիճակում, լինելով կառուցված ացինկովնի բարակ թիթեղից՝ տարիների ընթացքում ենթարկվել է կոռզիայի, ինչը կհանգեցնի անձրևաջրերի և ձմռանը ձնհալից առաջացած ջրերի ներս թափանցմանը, որը պատճառ կդառնա ամբողջ կառույցի ներքին պատերի և առաստաղի քայքայմանը:</td></tr>
</table>

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ

„Մաշված ոչ սարքի գույքի օտարում նորը ձեռք բերելու համար,,
(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Հացահատիկի հունձը որակով և ժամանակին ապահովելու համար ձեռք բերել նոր ժամանակից տեխնիկա:						
Ծրագրի անմիջական նպատակ	Գյուղատնտեսության զարգացում						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ/հազար դրամ/				
		2016	2017	2018	2019	2020	2021
							20000
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. Հացահատիկի հունձը ապահովել ժամանակին և որոկով : 1.2. 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1.Կազմել օտարման ցանկ, ոչ եկամտաբեր և անսարք գույքի մասով: 2.2. Ներկայացնել ավագանու հաստատմանը 2.3.Բանակցություններ տանել այլ դոնոր կազմակերպությունների հետ պահանջվող գումարը ապահովելուն: 2.4 Ընտրել ճիշտ գնման ընթացակարգ գնումը կատարելուն						
Ծրագրի բյուջեն	Գնման արժեք 20000 /հազար դրամ/ Ընդհանուր բյուջեն՝ 20000 /հազար դրամ/						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Համայնքի բյուջե՝ 6000 /հազար դրամ/ Այլ աղբյուրներից՝ 14000 /հազար դրամ/						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Ֆինանսավորման հարցը լուծված չէ /գնում է բանակցություններ/						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչներ						
Ծրագրի սկիզբ և ավարտ	01.02.2021թ-25.12.2021թ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	*Համայնքում գյուղատնտեսության զարգացում , գյուղական մթերքի որակի և քանակի ավելացման նպատակներով օտարել ոչ սարքին և առավել մաշված գյուղ. Տեխնիկ՝, նորը ձեռք բերլու համար:*						

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ

„ Հակակարկտային կայանի գնման„

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	*Համայնքում բերքի պահպանման հարցը խոցելի է : Հաճախ տեղացող կարկուտի պատճառով բերքի կորստի չափերը զգալի են , ինչը բացասաբար է ազդում գյուղացու ֆինանսական վիճակին և կյանքի զարգացմանը: Հակակարկտային կայանների առկայության դեպքում բերքի 70% երաշխավորված է:*						
Ծրագրի անմիջական նպատակ	Գյուղատնտեսության զարգացում						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ/հազար դրամ/				
		2016	2017	2018	2019	2020	2021
							500
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. *Հակակարկտային կայանների առկայության դեպքում բերքի 70% երաշխավորված է:* 1.2. 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1.Կազմել օտարման ցանկ, ոչ եկամտաբեր և անսարք գույքի մասով: 2.2. Ներկայացնել ավագանու հաստատմանը 2.3.						
Ծրագրի բյուջեն	Գնման արժեք 500 /հազար դրամ/ Ընդհանուր բյուջեն՝ 500 /հազար դրամ/						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտայլ ռեսուրսներ	Համայնքի բյուջե՝ 500 /հազար դրամ/						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Ֆինանսավորման հարցը լուծված չէ, կներառվի 2021թ.համայնքի բյուջեում /գնում է բանակցություններ/						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչներ						
Ծրագրի սկիզբ և ավարտ	01.02.2021թ-25.12.2021թ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	1 միավոր հակակարկտային կայանի գործողության շառավիղը 80 հա է , իսկ գինը 5000,0 հազ. դրամ : Ծաթեր համայնքի մշակվող տարածքը 329.9 հա , որից միամյա ցանքսերը շուրջ 288 հա, ամբողջը պահպանելու համար անհրաժեշտ է 3 միավոր հակակարկտային կայան: Համայնքն ունի 1 միավոր, անհրաժեշտ է այս հնգամյա զարգացման ծրագրով ձեռք բերել ևս 1 միավոր:						

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ

„Ոռոգման ցանցի (ոռոգվող տարածքը՝288 հա) կառուցում„

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Գյուղատնտեսական ոռոգվող հողերի ոռոգման ապահովում:						
Ծրագրի անմիջական նպատակ	Գյուղատնտեսության զարգացում						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ/հազար դրամ/				
		2016	2017	2018	2019	2020	2021
				12000	16000		
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1 Գյուղատնտեսական հողերի ոռոգում: 1.2. 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1.Նախահաշիվ կատարվող աշխատանքների ծավալաթերթեր: 2.2 Հրահանգ հայտ պատրաստելու:: 2.3. Աշխատանքների կատարման գնման պայմանագիր 2.4 Աշխատանքային պայմանագիր: 2.5 Այլ պահանջվող փաստաթղթեր:						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ Կապիտալ ծախսեր՝28000/հազար դրամ/ Ընդհանուր բյուջեն՝28000 /հազար դրամ/						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Համայնքի բյուջե՝ 5000/հազար դրամ/ Ներդրում աշխ. ուժի տեսքով 750/հազար դրամ/ Այլ աղբյուրներ 22250 /հազար դրամ/						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Ֆինանսավորման հարցը կլուծվի համայնքի բյուջեից պահանջվող ներդրման մասով կներառվի 2018,2019թթ բյուջեներում /գնում է բանակցություններ /						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչներ						
Ծրագրի սկիզբ և ավարտ	01.04.2018թ-31.12.2019թ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Համայնքի 329 հա վարելահողից 288 հա համարվում է ոռոգվող , համայնքի բնակչության հիմնական եկամուտը գյուղատնտեսությունն է, անհրաժեշտ է ապահովել առավել բարձր բերքատվություն, ստեղծել բարենպաստ պայմաններ համախառը արտադրանքը բարձրացմանը խթանելուն, ինչի կարևոր գործոններից է ոռոգման ցանցի առկայությունը:						

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ

„Ներհամայնքային փողոցների լուսավորվածություն„

(Ծրագրի անվանում)

<table>
<tr><td>Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը</td><td colspan="7">Ներհամայնքային փողոցների լուսավորվածության 100%-ով ապահովում:</td></tr>
<tr><td rowspan="4">Ծրագրի անմիջական նպատակ</td><td colspan="7">Համայնքի զարգացում</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="6">Թիրախային արժեքներ/հազար դրամ/</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td></td><td></td><td></td><td></td><td>120.0</td><td></td></tr>
<tr><td rowspan="7">Ծրագրի միջանկյալ արդյունքներ</td><td colspan="7">1.</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="6">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td></tr>
<tr><td colspan="7">2.</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="6">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական գործողությունները</td><td colspan="7">1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ
1.1 Փողոցների լուսավորում:
1.2.

2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ
2.1.Նախահաշիվ՝ լուսատուների քանակի և տեղի որոշում:
2.2 Նյութերի գնման բանակցություններ:
2.3. Բնակչության կենսամակարդակի բարձրացում</td></tr>
<tr><td>Ծրագրի բյուջեն</td><td colspan="7">Ընթացիկ ծախսեր՝ 120.0 /հազար դրամ/
Կապիտալ ծախսեր՝
Ընդհանուր բյուջեն՝120.0 /հազար դրամ/</td></tr>
<tr><td>Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ</td><td colspan="7">Համայնքի բյուջե՝ 120.0/հազար դրամ/</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական ռիսկերը</td><td colspan="7">Ֆինանսավորման հարցը կլուծվի է համայնքի բյուջեից՝ կներառվի 2020թ բյուջեում /գնում է բանակցություններ /</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական շահառուները</td><td colspan="7">Համայնքի բնակիչներ</td></tr>
<tr><td>Ծրագրի սկիզբ և ավարտ</td><td colspan="7">01.06.2020թ-31.09.2020թ.</td></tr>
<tr><td>Ծրագրի համառոտ նկարագրություն</td><td colspan="7">Գիշերային լուսատուների քանակությունը ավելացնելով մինչև 25 հատ գյուղի լուսավորության խնդիրը լուծվում է 100 % -ով , ինչը բնակիչների կյանքի և կենցաղային պայմանների բարելավում է :</td></tr>
</table>

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ

„ Համայնքի ներհամայնքային ճանապարհների նորոգում„

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Ներհամայնքային բարեկարգ ճանապարհներ:						
Ծրագրի անմիջական նպատակ	Համայնքի զարգացում						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ/հազար դրամ/				
		2016	2017	2018	2019	2020	2021
					459.0		
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1 Համայնքի ներհամայնքային ճանապարհների նորոգում„ 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. Նախահաշիվ 2.2 Համապատասխան տեխնիկայի ներ գրավում: 2.3. Նյութերի (դիզ. վառելանյութի) գնման բանակցություններ:						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 459.0 /հազար դրամ/ Կապիտալ ծախսեր Ընդհանուր բյուջեն՝459.0 /հազար դրամ/						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Համայնքի բյուջե՝ 256.0/հազար դրամ/ Ներդրում աշխ. ուժի տեսքով 203.0/հազար դրամ/						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Ֆինանսավորման հարցը կլուծվի համայնքի բյուջեից՝ կներառվի 2019թ բյուջեում:/գնում է բանակցություններ/						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչներ						
Ծրագրի սկիզբ և ավարտ	01.04.2019թ-31.08.2019թ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Համայնքի ունի շուրջ 52 հատ մարդատար մեքենաներ և 4.5 կմ հասնող ներհամայնքային ճանապարհներ, որը գտնվում է անմխիթար վիճակում, անհրաժեշտ է կատարել փոսալցում, կանխել մեծ փոսերի առաջացումը, որը կապահովի թեթև մարդատար մեքենաների շարժը:						